

1219

3K23
9-52

Վ. Ի. ԼԵՆԻՆ

ԶԵԿՈՒՑՈՒՄ 1905 ԹՎԻ
ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

9(47) „1905”
L-35

Հ Օ Զ Կ Ո Ւ Հ Ր Ո Ւ Տ ։ 1 9 3 8 ։ Յ Ե Ր Ե Գ Ա Ր Ե

24 MAY 2005

Պրոլետարիատ բուլոր յերկրթերի, միացե՛ք

Ա. Զ.

3K23

9-52

ԱՀ

Կ2

Վ. Ի. ԼԵՆԻՆ

03 NOV 2000

ԶԵԿՈՒՑՈՒՄ 1905 ԹՎԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Կարդացված՝ քանիվորական յերկտասարդության կողմից
1917 թ. հունվարի 22(9)-ին

Յյուրիինի «Ժողովրդական տանը» կազմակերպված ժողովում

7219

10 SEP 2013

В. И. ЛЕНИН
ДОКЛАД О РЕВОЛЮЦИИ 1905 ГОДА
Армпартиздат, Ереван, 1938



633
38

ԶԵԿՈՒՑՈՒՄ 1905 ԹՎԼԻ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ¹⁾

Պատահի բարեկամներ՝ և ընկերներ:

Այսոր տասներկույթրորդ տարեդարձն ե այն «Արյունոտ Կիրակիի», վորն ամենայն իրավամբ դիտվում ե վորպես ռուսական հեղափոխության սկիզբը:

Հազարավոր բանվորներ, —և այն ել՝ վոչ, սոցիալ-դեմոկրատական, այլ հավատացյալ, հլու-հպատակ մարդիկ, Գալոպն քահանայի առաջնորդությամբ հոսում են քաղաքի բոլոր մասերից դեպի մայրաքաղաքի կենտրոնը, գեղի Զմեռային պալատի առջև գտնվող հրապարակը, վորպեսզի ցարին հանձնեն իրենց խնդրագիրը: Բանվորները գնում են սրբազատկերներով, և նրանց այն ժամանակվա առաջնորդ Գալոպնը գրավոր հավաստիացնում եր ցարին, վոր ինքը յերաշխավորում ե նրա անձնական ապահովությունը և խնդրում ե նրանից դուրս գալ ժողովրդի առաջ:

Կանչվում են զորքեր: Ուշաներն ու կազակները սառը գենքերով հարձակվում են ամբոխի վրա, կրակում են անգեն բանվորների վրա, վորոնք ծնկաչոք աղաչում ելին կազակներին, վորիրենց թույլ տան ցարի մոտ գնալ: Հստ վոստիկանական գեկուցագրի՝ այն ժամանակ սպանվել ե հազարից ավելի և վերավորվել ե յերկու հազարից ավելի մարդ: Աննկարագրելի յե յեղել բանվորների զայրութը:

Ահա 1905 թվի հունվարի 22-ի «Արյունոտ Կիրակիի» ամենաընդհանուր պատկերը:

Այս անցքի նշանակությունը ձեզ ալելի ակնառու դարձնելու համար յես կկարդամ միքանի հատված բանվորների խնդրագրից: Խնդրագիրն հետեւալ կերպ ե սկսվում:

«Մենք, Պետերբուրգի բնակիչ բանվորներս, յեկել ենք Քեզ մոտ: Մենք դժբախտ, արհամարհված ստրուկներ ենք, մենք ճնշված ենք դեսպոտիզմից և կամայականությունից: Յերբ

այլնս լցվեց համբերության բաժակը, մենք դադարեցրինք աչ-խատանքը և բնդրեցինք մեր գործարանատերերից, վոր մեզ տան սուկ այն, առանց վորի կանքը դառնում և տանջանք: Սակայն այդ ամենը մերժվեց, գործարանատերերին ամեն ինչ ապրինի թվաց: Մենք այստեղ, բազում հազարներս, ինչպես և ամբողջ ուսւ ժողովուրդը, վոչ մի մարդկային իրավունք չունենք: Շնորհիվ Քո շինովնիկների մենք դարձել ենք ստրուկներ»:

Խնդրագիրը թվում և հետեյալ պահանջները. ամնիստիա, հասարակական ազատություններ, նորմալ աշխատավարձ, հողի աստիճանաբար հանձնումը ժողովրդին, Սահմանադիր ժողովի գումարում՝ ընդհանուր և հավասար ընտրական իրավունքի հեման վրա, և վերջանում և հետեյալ խոսքերով. «Թագավոր՝ Մի՛ զլանար ոգնելու Քո ժողովրդին: Խորտակի՛ր Քո և Քո ժողովրդի միջև յեղած պատը: Հրամայի՛ր և յերդվի՛ր, վոր կատարվեն մեր խնդիրները, և Դու կերջանկացնես Ռուսաստանը: Յեթե վոչ, այն ժամանակ մենք պատրաստ ենք հենց այստեղ մեռնելու: Մենք միմիայն յերկու ճանապարհ ունենք. ազատություն ու յերջանկություն, կամ գերեզման»²⁾:

Տարրինակ տպավորություն ես զգում, յերբ իիմա յես կարդում նահապետական քահանայի զեկալարության տակ գտնված անուս ու անգրագետ բանվորների այս խնդրագիրը: Մարդու մտքում ակամայից զուգահեռական և գծվում այս միամիտ ինքը կագրի և սոցիալ-պացիֆիստների այժմյան խաղաղ բանաձեռի միջև, այսինքն՝ մարդկանց, վորոնք կամենում են սոցիալիստ լինել, բայց իրականում լոկ միայն բուրժուական ֆրազյորներ են: Մինչհեղափոխական Ռուսաստանի անդիտակից բանվորները չգիտեյին, վոր ցարը տիրող դասակարգի, այն ե՝ խոչոր հողատերերի դասակարգի գլուխն ե, և վոր այդ խոչոր հողատերերն արդեն հազարավոր թելերով կապված են խոչոր բուրժուազիայի հետ և բռնության բոլոր միջոցներով պատրաստ են պաշտպանելու իրենց մոնուպոլիան, արտոնություններն ու յեկամուտները: Արդի սոցիալ-պացիֆիստները, վորոնք—կատակը դե՛նը—կամենում են «մեծապես ուսույալ» մարդիկ յերեալ, չգիտեն, վոր իմպերիալիստական ավագակային պատերազմ մղող բուրժուական կառավարություններից «գեմոլիրատական» խաղաղություն ակնկալելը նույնքան հիմար բան ե, վորքան հիմար և այն միտքը, թե արյունաբրու ցարին իրը կարելի յե խաղաղ խնդրագրելով տրամադրել ոեֆորմների կողմը:

Սակայն այնուհանդերձ նրանց խոչոր տարբերությունն այն

է, վոր արդի սոցիալ-պացիֆիստները խոշոր չափով կեղծավոր-ներ են, վորոնք հեղաբարու ներշնչումներով ձգտում են հետ պահանջ ժողովրդին հեղափոխական կովից, մինչեւու մինչհեղափոխական Ռուսաստանի անուս բանվորները գործով ապացուցեցին, վոր նրանք առաջին անդամ քաղաքական գիտակցության յեկած շիտակ մարդիկ են:

Յեվ ահա, 1905 թվի հունվարի 22-ի պատմական նշանակությունն հենց այն է, վոր ժողովրդական հսկայական մասսաները քաղաքական գիտակցության յեկան և արթնացան հեղափոխական կովի համար:

«Ռուսաստանում դեռ չկա հեղափոխական ժողովուրդ», — այսպես եր գրում «Արյունոտ Կիրակից» յերկու որ առաջ պարոն Պյոտր Սարուկինը³⁾, ոռուսական լիբերալների այն ժամանակվա առաջնորդը, վորն այն ժամանակ անլեգալ ազատ, արտասահմանյան որդան եր հաստարակում: Այլպիսի անհեթեթություն եր թվում բուրժուական ու ֆորմիստների այդ «մեծապես ուսույալ», մեծամիտ և արխիտիմար առաջնորդին այն գաղափարը, թե անգրագետ գյուղացիական յերկերը կարող և հեղափոխական ժողովուրդ ծնել: Այնքան խորն եր այն ժամանակվա, — ինչպես և այժմյան, — ու ֆորմիստների համոզմունքը, թե անհնարին և խկական հեղափոխությունը:

Մինչև 1905 թվի հունվարի 22 (հին տոմարով 9)-ը Ռուսաստանի հեղափոխական կուսակցությունը բաղկացած եր մի ըուռ մարդկանցից, — այն ժամանակվա ու ֆորմիստները (իսկ և իսկ այնպես, ինչպես այժմյանները), ծաղրելով, մեղ «սեկտա» եյին անվանում: Միքանի հարյուր հեղափոխական կազմակերպիչներ, տեղային կազմակերպությունների մի քանի հազար անդամներ, ամիսու մեկ անգամից վոչ հաճախ լույս տեսնող կես դյուժին հեղափոխական թերթիկներ, վորոնք հաստարակվում եյին գլխավրապես արտասահմանում ու մաքսանենդ ճանապարհով, աննկարագրելի գիշարություններով, մեծամեծ զոհերի գնով ուղարկվում եյին Ռուսաստան, — այսպես եյին հեղափոխական կուսակցությունները Ռուսաստանում և առաջին հերթին հեղափոխական սոցիալ-դեմոկրատիական մինչև 1905 թվի հունվարի 22-ը: Այս հանգամանքը ձևականորեն իրավունք եր տալիս սահմանափակ ու գորոզ ու ֆորմիստներին պնդելու, թե Ռուսաստանում ժեռնես հեղափոխական ժողովուրդ չկա:

Սակայն մի քանի ամսվա ընթացքում պատկերը բոլորովին փոխվեց: Հարյուրավոր հեղափոխական սոցիալ-դեմոկրատները

«Հանկարծակի» վերածվեցին հազարների. հազարները դարձան յերկուսից—յերեք միլիոն պրոլետարների առաջնորդներ: Պրոլետարական պայքարը մեծ խմորում, մասսամբ և հեղափոխական շարժում առաջացրեց հիսուն-հարյուրմիլիոննոց դյուլացիական մասսայի խորքերում, գյուղացիական շարժումն արձագանք դտավ բանակում և մղեց գեղի զինվորների ապստամբություններ, դեպի զինված ընդհարումներ բանակի զանազան մասերի միջև: Այսպիսով, 130 միլիոն բնակչություն ունեցող հակայական յերկիրը վոտք դրեց հեղափոխության ուղին, այսպիսով, նիրող Ռուսաստանը դարձավ հեղափոխական պրոլետարիատի ու հեղափոխական ժողովրդի Ռուսաստան:

Անհրաժեշտ ե ուսումնասիրել այդ անցումը, հասկանալ նրա հարավորությունը, նրա, այսպէս ասած, մեթոդները և ուղիները:

Այդ անցման ամենադլխավոր միջոցը մասսայական գործադրություն եր: Ռուսական հեղափոխության յուրակերպ կողմը հենց այն ե, վոր նա իր սոցիալական բովանդակությամբ բուրժուադարձությունության միջոցներով՝ պրոլետարական նա բուրժուադարձության միջոցներով՝ վորով հաջող կարող եր հասնել անմիջականորեն: ձգտում եր և վորին կարող եր հասնել անմիջականորեն իր սեփական ուժերով, գեմոլրատական հանրապետությունն եր, 8-ժամյա աշխատանքային որը, ազնվական հակայական խոշոր հողատիրության կոնֆինկացիան,— այն բոլոր միջոցները, վորոնք գրեթե լիակատար ծավալով կենսագործել եր բուրժուական հեղափոխությունը ֆրանսիայում 1792 և 1793 թթ.:

Դրա հետ միասին ոռուսական հեղափոխությունը նաև պրոլետարական եր, վո՞չ միայն այն իմաստով, վոր պրոլետարիատը շարժման ղեկավարող ուժն եր, նրա ավանդաբան եր, այլև այն իմաստով, վոր կովի սպեցիֆիկ պրոլետարական միջոցը, այն ե՝ գործադրուլ մասսաները շարժելու գլխավոր միջոցն եր և վճռական անցքերի ալիքաձեւ վերածման մեջ ամենից ավելի բնորոշ յերեսույթը:

Ռուսական հեղափոխությունը համաշխարհային պատմության մեջ առաջին մեծ հեղափոխությունն ե, սակայն, անկասկած, նա չի լինի վերջին մեծ հեղափոխությունը, վորտեղ քաղաքական մասսայական գործադրույն արտասովոր խոշոր գերեւ կատարել: Կարելի յե նույնիսկ պնդել, վոր անհնարին ե ըմբռունել ոռուսական հեղափոխության անցքերն ու նրա քաղաքա-

կան ձեւերի փոփոխությունը, յեթե գործադրությունը կիմակագրությամբ չուսումնասիրենք այդ անցքերի հիմքն ու ձեւերի այդ փոփոխությունը:

Յես շատ լավ գիտեմ, թե բանավոր զեկուցմանը վորքան չեն հարմարվում վիճակագրական չոր ու ցամաք թվերը, թե վորքան ընդունակ են նրանք ունկնդրին խրանեցնելու: Բայց և այնպէս յես չեմ կարող չհեշտակել մի քանի կլորացրած թվեր, վորպեսզի մենք հնարավորություն ունենանք գնահատելու ամբողջ շարժման իսկական որյեկտիվ հիմքը: Գործադրութավորների տարեկան միջին թիվը Ռուսաստանում 10 տարվա ընթացքում հեղափոխությունից առաջ հավասար եր 43 հազարի: Հետեւաբար, գործադրութավորների ընդհանուր թիվը ամբողջ տասնամյակի ընթացքում հեղափոխությունից առաջ կազմում եր 430 հազար: 1905 թվի հունվարին, հեղափոխության առաջին ամսին, գործադրութավորների թիվը հավասար եր 440 հազարի: Նշանակում ե՝ միմիայն մեկ ամսվա լինքացքում ավելի, քան ամբողջ նախընթաց տասնամյակում:

Աշխարհիս կապիտալիստական և վո՞չ մի յերկրություն, մինչեւ անդամ ամենաառաջավոր այնպիսի յերկրներում, ինչպիսիներն են Անդիան, Ամերիկայի Միացյալ Նահանգները, Դերմանիան, աշխարհը չեր տեսել գործադրությին այնպիսի մի հակայական շարժում, ինչպես Ռուսաստանում 1905 թվին: Գործադրութավորների ընդհանուր քանակը հավասար եր 2 միլիոն 800 հազարի, յերկո՞ւ անդամ ավելի, քան գործարանային բանվորների ընդհանուր թիվը: Այս, իհարկե, չի ապացուցում, թե քաղաքային գործարանային բանվորները Ռուսաստանում ավելի կը թված են յեղել, կամ ավելի ուժեղ և կամ թե կովի ավելի ընդունակ դարձած, քան թե Արևմտյան Ենլորպայի նրանց յեղայրները: Ճիշտը հենց հակառակն ե:

Սակայն այս ցույց ե տալիս, թե վորքան մեծ կարող ե լինել պրոլետարիատի նիրհող յեռանդը: Այս վկայում ե այն մասին, վոր հեղափոխական դարձրջանում, — յես այդ պնդում եմ առանց վորևել չափազանցության, ոռուսական պատմության ամենասառը տվյալների հիման վրա, — պրոլետարիատը կարող ե հարյուր անգամ ավելի կովի յեռանդ ցուցաբերել, քան սովորական հանգիստ ժամանակի: Այս վկայում ե այն մասին, վոր մարդկությունը մինչև 1905 թվականը դեռևս չգիտեր, թե վորքան մեծ, վորքան վիթխարի կարող ե լինել և կլինի պրոլետարիատի ուժերի լարումը, յեթե խնդիրը վերաբերում ե իրապես

մեծ նպատակների համար կովելուն, իրապես հեղափոխականութեն կովելուն:

Մոռսական հեղափոխության պատմությունը ցույց է տալիս մեզ, վոր հենց ավանդաբութեան, վարձու բանվորների ընտիր տարրերն եյին, վոր կոմիլ եյին մղում մեծագույն համառությամբ և մեծագույն անձնազոհությամբ: Վորքան ավելի խոչը եյին գործարանները, այնքան ավելի համառ եյին ընթանում գործադուլները, այնքան ավելի հաճախ եյին կրկնվում նրանք միԱնույն տարվա ընթացքում: Վորքան ավելի խոչը եր քաղաքը, այնքան ավելի մեծ եր պրոլետարիատի դերը կովի մեջ: Յերեք խոչը քաղաք, վորտեղ ապրում են ամենագիտակից և ամենաբազմաբանակ բանվորները, Պետերովուրդը, Ռիդան և Վարշավան, տալիս են գործադուլավորների անհամեմատ ավելի մեծ քանակ՝ բանվորների ընդհանուր թվի համեմատությամբ, քան թե բոլոր մյուս քաղաքները, ել չխոսելով արդեն գյուղի մասին:

Մետաղադործները մոռսաստանում,—հավանորեն ճիշտ այնպես, ինչպես և կապիտալիստական այլ յերկրներում,—պրոլետարիատի առաջավոր ջոկատն են կազմում: Յեվ այստեղ մենք նկատում ենք հետեւյալ ուսանելի փաստը. գործարանային բանվորների ամեն մի հարյուրյակը մոռսաստանում ընդհանրապես ավել և 1905 թվին 160 գործադուլավոր: Մինչդեռ մետաղագործների ամեն մի հարյուրյակը նույն այդ թվին տվել է 320 գործադուլավոր: Էստ կատարած հաշվարելիությունների՝ ուսանական ամեն մի գործարանային բանվոր 1905 թվականին, գործադուլի հետեւնքով, կորցնելիս ե յեղել միջին թվով 10 ոուրդի—մոտավորպես 26 ֆրանկ մինչպատերազմյան կուրսով,—այսպիս ասած՝ զոհելիս ե յեղել այդ գումարը կովի համար: Իսկ յեթե վերցնենք միմիայն մետաղադործներին, ապա կստանանք յերե՛ք անգամ ավելի մի գումար: Առջևից գնում եյին բանվոր դաստիարկի ամենալավագույն տարրերն՝ իրենց հետեւց տանելով տատանվողներին, արթնացնելով քնածներին և քաջալերելով թույլերին:

Բացառիկ կերպով յուրակերպ եր տնտեսական ու քաղաքական գործադուլների միահյուսումը հեղափոխության ժամանակի:

Կասկածից դուրս ե, վոր գործադուլների այդ յերկու ձեւի ամենասերտ կապն եր միայն, վոր ապահովեց շարժման խոչը ուժը: Շահագործվողների լայն մասսաները չեր կարելի վոչ մի կերպ ներդրավել հեղափոխական շարժման մեջ, յեթե այդ մաս-

սաներն ամենորյա որինակներ չտեսնեյին իրենց առջեւ, թե ինչպես արդյունարերության տարբեր ճյուղերի վարձու բանվորները հարկադրում են կապիտալիստներին անմիջականորեն և անհապաղ բարեկավելու իրենց վիճակը: Այս կոմիլ չնորհիվ նոր չունչ արթնացավ ոուս ժողովրդի ամբողջ մասսայում: Ճորտափիրական, արջային, նահապետական, բարեպաշտ և խոնարհ մոռսաստանը միայն այժմ թոթափեց իրենից հին Աղամին, միայն այժմ եր, վոր ոուս ժողովրդն իսկական դեմոկրատական, իսկական հեղափոխական դաստիարակություն ստացավ:

Յեթե բուրժուական պարոններն ու նրանց վոչ-քննադատուրեն ձայնարկուները, սոցիալիստական ունիորմիստներն, այդպիսի սնապարձությամբ են խոսում մասսաների «դաստիարակության մասին», ապա՝ դաստիարակություն ասելով, նրանք սովորաբար հասկանում են ինչ-վոր դպրոցական, պեղանտական, մասսաներին բարոյալքող, բուրժուական նախապաշարումներ պատվաստող մի բան:

Մասսաների իսկական դաստիարակությունը յերբեք չի կարող բաժանվել իրեն իսկ մասսայի ինքնուրույն քաղաքական և առանձնապես հեղափոխական պայքարից: Միայն պայքարն ե դաստիարակությունը դաստիարակությունը, միայն պայքարն ե ցույց տալիս նրան իր ուժերի չափը, ընդարձակում նրա մտահորիզոնը, բարձրացնում նրա ընդունակությունները, պարզում նրա միտքը, կոփում նրա կամքը: Յեվ այս պատճառով ել նույնիսկ հետադիմականներն ստիպված եյին ընդունելու, վոր 1905 թվականը—պայքարի տարին, «խելագար տարին»—վերջնականապես դագաղի մեջ գրեց նահապետական մոռսաստանը:

Մոտիկից քննենք մետաղագործների և մանածագործների միջև յեղած հարաբերակցությունը մոռսաստանում 1905 թվի գործադուլային պայքարի ժամանակ: Մետաղագործներն ամենալավ վարձատրվող, ամենագիտակից, ամենակուլտուրական պրոլետարներն են: Մանածագործ բանվորները, վորոնց թիվը մոռսաստանում 1905 թվին յերկու և կես անգամ ավելի յեր մետաղագործների թվից, ամենահետամնաց, բոլոր մյուսներից ել ավելի պակաս վարձատրվող մասսան եյին, վորը հաճախ դեռ վերջնականապես չեր խզել իր կապը գյուղում յեղած իր գյուղական ազգականներից: Յեվ այստեղ մենք հանդիսում ենք հետեւյալ շատ կարևոր հանդամանքին:

Մետաղագործների գործադուլներն ամբողջ 1905 թվի ընթացքում գերակշռություն են տալիս քաղաքական գործադուլին՝

տնտեսականի համեմատությամբ, թեպետ տարվա սկզբին այդ գերակշռությունը դեռ բնակ այնքան խոչըն չէ, վորքան տարվա վերջին: Բնդհակառակը, մանածագործների մոտ 1905 թվի սկզբին մենք նկատում ենք տնտեսական գործադուլների վիթխարի գերակշռություն, վորպիսին տարվա վերջին և միայն, վոր փոխարինվում ե քաղաքական գործադուլի գերակշռությամբ: Այս տեղից լիակատար պարզությամբ բղխում ե, վոր միայն տնտեսական կորին ե, միայն սեփական վիճակն անմիջապես և անհապաղ բարելավելու համար մզվող կորին ե, վոր ընդունակ ե թափ տալու շահագործվող մասսայի հետամնաց խավերին, այդ ե, վոր իսկական դաստիարակություն և տալիս նրանց և հեղափոխական դարաշրջանում—միքանի ամսվա ընթացքում —դարձնում ե նրանց քաղաքական մարտիկների մի բանակ:

Իհարկե, դրա համար անհրաժեշտ եր, վոր դասակարգային կորի ասելով բանվորների առաջալոր ջոկատը նկատի ունենար վո՛չ թե բանվորների գերին փոքրիկ շերտի շահերի համար մըղվող կովկը, ինչպես այդ շատ հաճախ աշխատել են ներշնչել բանվորներին ուժիքությանը, այլ այն, վոր բանվորներն իսկապես հանդես դային իրրե շահագործվողների մեծամասնության ավանդաբարդ, կովկ մեջ ներդրավելին այդ մեծամասնությանը, ինչպես այս տեղի ունեցավ Ծոռսաստանում 1905 թվին և ինչպես այս պիտի ունենա և անկասկած տեղի յե ունենալու դալիք պրոլետարական հեղափոխության մեջ Յեվրոպայում:

1905 թվի սկիզբը գործադուլային շարժման առաջին մեծ հորձանքը բերեց ամբողջ յերկրում: Այդ տարվա գարնանն արդեն մենք նկատում ենք առաջին խոչըն, վո՞չ միայն տնտեսական, այլև քաղաքական գյուղացիական շարժման զարթոնքը Ծոռսաստանում: Թե ինչպիսի կարևոր նշանակություն ունի պատմության համար շրջադարձային այդ իրողությունը, այդ կարող ե ըմբռնել միմիայն նա, ով կմտարերի, վոր գյուղացիությունը Ծոռսաստանում միմիայն 1861 թվին եր ազատագրվել ամենածանր ու ճնշող ճորտական կախումից, վոր գյուղացիներն իրենց մեծամասնությամբ անդրագետ են, ապրում են աննկարագորելի կարիքի մեջ, ճնշված լինելով կալվածատերերից, մոլոր վեցած՝ տերաբերներից, իրարից անջատված հակայական տարածություններով և ճանապարհների գրեթե բացակայությամբ:

1825 թվականին Ծոռսաստանն առաջին անգամ տեսավ հեղափոխական շարժումը ցարիզմի դեմ, և այդ շարժումը ներկա-

յացնողը գրեթե բացառապես ազնվականներն ելին: Այդ մոմենտից սկսած և մինչև 1881 թվականը, յերբ տեսորիստների ձեռքով սպանվեց Ալեքսանդր II-ը, շարժման գլուխ ելին կանոնած միջին դասից դուրս յեկած խոտելիքները: Նրանք մեծագույն անձնազոհություն ցուցաբերեցին և իրենց կովկի տեսորիստական հեղափոխական մեթոդով ամբողջ աշխարհի զարմանքը շարժեցին: Անկասկած, իզուր չընկան այդ գոհերը, անկասկած—ուղղակի թե անուղղակի—նրանք նպաստեցին ոռուս ժողովրդի հետագա հեղափոխական դաստիարակությանը: Բայց իրենց անմիջական նպատակին՝ ժողովրդական հեղափոխության արթնացմանը՝ նրանք չհասան և չեյին ել կարող հասնել:

Այդ բանը հաջողվեց միայն պրոլետարիատի հեղափոխական պայքարին: Ամբողջ յերկրով ծայրից-ծայր անցած մասսայական գործադուլի հորձանքներն ելին միայն, վոր ոռուս-ճապոնական իմպերիալիստական սպատերազմի դաժան գասերի կապակցությամբ, զարթեցրին գյուղացիության լայն մասսաներին լեթարգիական քնից: «Դործադուլավոր» բառը բոլորովին նոր նշանակություն ստացավ գյուղացիների մոտ. այդ բառը նշանակում եր բունտարարի, հեղափոխականի նման մի բան, ինչ վոր առաջնորդում արտահայտվում եր «ուսանող» բառով: Սակայն ինչ չափով վոր «ուսանող» պատկանում եր միջին դասին, «գիտուններին», «պարուններին»,—նա խորթ եր ժողովրդին: Բնդհակառակը, «գործադուլավոր» հենց ինքն ել դուրս եր յեկել ժողովրդից միջից, ինքն ել պատկանում եր շահագործվողների թվին. աքսորվելով Պետերբուրգից՝ նա շատ հաճախ վերադասնում եր գյուղ և պատմում եր իր գյուղական ընկերներին այն հրղեհի մասին, վոր ընդգրկում եր քաղաքները և վորը պետք ե վոչընչացներ ինչպես կապիտալիստաներին, այնպես ել ազնվականներին: Ծոռսական գյուղում յերեան յեկավ մի նոր տիպ—յերիտասարդ գիտակից գյուղացին: Նա շիկում եր «գործադուլավորների» հետ, նա թերթեր եր կարգում եր գյուղ դաշիներին քաղաքներում տեղի ունեցող անցքերի մասին, նա քացատրում եր գյուղական ընկերներին քաղաքական պահանջների նշանակությունը, նա կոչ եր անում նրանց կովկելու խոշոր հողատերապնդականների, տերտերների և չինովնիկների դեմ:

Գյուղացիները հավաքվում ելին խմբարով, քննության ելին առնում իրենց վիճակը և կամաց-կամաց ներդրավում ելին կովկ մեջ.—մեծ ամբոխներով նրանք գնում ելին խոչըն կալվածատերերի գեմ, հրկվում ելին նրանց պալատներն ու ազարակներու

կամ դրավում եյին նրանց պաշարները, բռնադրավում եյին հացը և այլ կենսամթերքները, սպանում եյին վոստիկաններին, պահանջում եյին, վոր ժողովրդին հանձնեն աղնվականների հըսկայական կալվածքների հողերը:

1905 թվի գարնանը գյուղացիական շարժումը գեռես իր սաղմնային վիճակումն եր, նա ընդգրկել եր գալառների փոքրամանությունը միայն, մոտավորապես նրանց յոթերորդ մասը:

Բայց քաղաքների պրոլետարական մասսայական գործադրութիւնացումը գյուղացիական շարժման հետ բավական եր ցարիզմի «ամենակայուն» և վերջին հենարանը խախտելու համար: Յես նկատի ունեմ բանակը:

Սկսվում ե զինվորական ապստամբությունների շրջանը նավատորմում և բանակում: Գործադրությային և գյուղացիական շարժման ալիքի ամեն մի բարձրացումը Հեղափոխության ժամանակ զուգորդվում է զինվորների ապստամբությունների հետ Ռուսաստանի բոլոր ծայրերում: Ամենահայտնին դրանց մեջ այն ապստամբությունն ե, վորն առաջացել եր սեծովյան զրահանակ «իշխան Պոտյումկինի» վրա, վորն ընկնելով ապստամբների ձեռքը, մասնակցել եր Հեղափոխությանն Ողեստայում և վորը՝ Հեղափոխության պարագաներունից և մի շարք այլ հավահանգստաներ (որինակ՝ Ֆեռորդուհան՝ Ղրիմում) դրավելու անհաջող փորձերից հետո անձնատուր յեղավ ոռումինական իշխանություններին Կոնստանցյայում:

Թույլ թվեր ինձ մանրամասն պատմել ձեզ Սևծովյան նավատորմի այդ ապստամբության մի փոքրիկ միջադեպը, վորպեսզի դուք անցքերի կոնկրետ պատկեր ունենաք նրանց զարգացման բարձրագույն կետում.

Կազմակերպվում եյին հեղափոխական բանվորների և նավաստիների ժողովներ, սրանք ավելի և ավելի հաճախ եյին տեղի ունենում: Վորովչետև զինվորականներին թույլ չեյին տալիս գնալու բանվորական միտինգները, այդ պատճառով բանվորներն սկսեցին հոծ մասսաներով հաճախել զինվորական միտինգները: Հավաքվում եյին հազարներով: Միասնորեն յելույթ կազմակերպելու գաղափարը կենդանի արձագանք գտավ: Ավելի դիտակից վաշտերում եյին պատղամալորներ:

Այն ժամանակ զինվորական համանատարությունը վորովցեց միջոցներ ձեռք առնել: Առանձին սպաների՝ միտինգներում «Հայրենասիրական» ճառեր ասելու փորձերը տալիս եյին ամենաուղբավալի արդյունքները. դիսկուսիաների վարժված նավաս-

տիները խայտառակ փախուստի եյին մատնում իրենց պետերին: Այդպիսի անհաջողությունները նկատի առնելով՝ վորոշվեց մետխնդներն ընդհանրապես արգելել: 1905 թվի նոյեմբերի 24-ի առավոտյան նավաստիական զորանոցների դարպասի առջև մարտական մի վաշտ եր կանգնեցված՝ մարտական լիակատար պատրաստությամբ: Փոխ-ծովակալ Պիտարեվսկին իլուր ամենի հրաման արձակեց: «Զորանոցներից վո՞չ վոքի դուրս չթողնել: Զշնագանդվելու դեպքում—կրակել»: Այն վաշտից, վորին աըրված ված եր հիշյալ հրամանը, առաջ յեկավ նավաստի Պետրովը, բոլորի աչքերի առջև լցրեց իր հրացանը, մեկ գնդակով սպանեց բրեստ-լիտովսկի գնդի փոխ-գնդապետ Շտեյնին, իսկ յերկրորդ գնդակով վիրապուրեց վոխ-ծովակալ Պիտարեվսկուն: Հնչեց սպատի հրամանը: «Զերբակալեցի՞ք սրան»: Վոչ վոք տեղից չշարժյի հրամանը: «Ինչո՞ւ յեք կանգնեց: Պետրովը գետին չպրտեց իր հրացանը: «Ինչո՞ւ յեք կանգնել, վերցրեցի՞ք ինձ»: Նա ձերբակալվեց: Ամեն կողմից դեպքի վայրը վազող նավաստիները բռուն կերպով պահանջում եյին աղատել նրան՝ հայտարարելով, վոր իրենք յերաշխավոր են նրա համար: Հուզմունքը հասել եր գաղաթնակետին:

— Պետրով, չե՞ վոր կրակոցը պատահական եր, այնպես չե՞՝ հարց տվեց սպան՝ ստեղծված դրությունից մի յելք գըտնելու նպատակով:

— Ինչո՞ւ յեր պատահական: Յես առաջ յեկա, հրացանս լցրի և նշան բռնեցի. մի՞թե այս պատահական ե...

— Նրանք պահանջում են քեզ ազատել...

Յեշ Պետրովն ազատ արձակվեց: Բայց նավաստիները դրանով չբավարարվեցին: Բոլոր հերթապահ սպաները ձերբակալվեցին, գինաթափ արվեցին և ուղարկվեցին գրասենյակ... Նավաստիների պատղամալորները՝ թվով մոտ 40 հոգի՝ խորհրդակցում եյին ամբողջ դիմումը: Վորոշեցին սպաներին ազատել և այլևս նրանց ներս չթողնել զորանոցները...

Այս փոքրիկ պատկերն ակնառու կերպով ցույց ետալիս ձեզ, թե ինչպես եյին կատարվում անցքերը զինվորական ապստամբությունների մեծ մասում: Հեղափոխական խմորումը ժողովրդի մեջ չեր կարող չընդգրկել նաև զորքին: Բնորոշ ե, վոր շարժման առաջնորդներ տալիս եյին ռազմական նավատորմի և րանակի հենց այն տարրերը, վորոնք զորակոչվում եյին գլխավորական բանկում ժողովունական բանվորների միջավայրից և վորունց համար պահանջվում եր տեխնիկական առավելագույն պատրաստություն, որինակ՝ սակրավորները: Բայց լայն մասսաները

գեռես չափաղանց միամիտ եյին, չափաղանց խաղաղորեն, չափաղանց բարեհոգի և չափաղանց քրիստոնեյաբար եյին տրամադրված։ Նրանք բռնկվում եյին բավական դյուրին կերպով, անարդարության վորեւ դեպքը, սպաների չափաղանց կոպիտ վարվեցողությունը, վատ սնունդը և այլն կարող եր զայրույթ առաջ բերել։ Բայց պակասում եր տոկունությունը, բացակայում եր խնդրի պարզ գիտակցումը։—պակասում եր այն բանի բավականաչափ հասկացողությունը, վոր միմիայն զինված կովի ամենայեռանդուն շարունակությունն ե, միմիայն բոլոր զինվորական և քաղաքացիական իշխանություններին հաղթելն ե, միմիայն ամբողջ պետության մեջ կառավարության տապալումը և իշխանության դրավումն ե հեղափոխության հաջողության միակ յերաշխիքը։

Հավաստիների և զինվորների լայն մասսաները դյուրությամբ սկսում եյին ապստամբվել։ Բայց նույնպիսի դյուրությամբ նրանք կատարում եյին նաև այն միամիտ հիմարությունը, վոր ապատ եյին արձակում ձերբակալված սպաներին։ Նրանք թույլ եյին տալիս, վոր իշխանությունն իրենց հանդստացնի խոստումներով ու համոգելով։ Այսպիսով, իշխանությունը շահում եր թանգարժեք ժամանակը, ոժանդակություն եր ստանում, ջլատում եր ապստամբների ուժերը, և ապա հետեւում եր ամենադաժան ճնշումն ու առաջնորդների պատիքը։

Հետաքրքրական և համեմատել 1905 թվի զինվորական ապլատամբությունները Ռուսաստանում 1825 թվի գեկարբիստների զինվորական ապստամբության հետ։ Այն ժամանակ քաղաքական շարժման զեկավարությունը գրեթե բացառապես պատկանում եր սպաներին, մանավանդ՝ ազնվական-սպաներին։ Նրանք վարակված եյին՝ նապուեոնյան պատերազմների ժամանակ չփնտելով Յեղվորապյի գեմոկրատական դաղավարների հետ։ Զինվորների ժամանակ, վոր այն ժամանակ բազկացած եր գեռես ճորտ գյուղացիներից, իրեն պասսիվ եր պահում։

1905 թվի պատմությունը միանգամայն հակառակ պատկերն ետալիս մեղ։ Սպաները՝ շատ աննշան բացառությամբ՝ այդ ժամանակ կամ բռւրժուալ-լիբերալ, ոճֆորմիստական, կամ թէ պարզապես հակահեղափոխական տրամադրություններ ունեյին։ Զինվորական համագոկսով բանվորներն ու գյուղացիները ապստամբության հողին եյին։ շարժումը դարձել եր ժողովրդական։ Ռուսաստանի պատմության մեջ առաջին անգամ եր, վոր այն ընդդրկեց չափործվողների մեծամասնությունը։ Այն, ինչ վոր նրան պա-

վասում եր, —մի կողմից՝ տոկունությունն եր, վճռականությունը՝ մասսաների, վորոնք չափաղանց շատ եյին տառապում վաստանության հիվանդությունից, մյուս կողմից՝ պակասում եր զինվորական համագոկսով հեղափոխական սոցիալ-դեմոկրատական բանվորների կաղմակերպությունը։ Նրանք հմտություն չունեյին զեկավարությունն իրենց ձեռքն առնելու, հեղափոխական բանակի դլուխ կանգնելու և հարձակման դիմելու ընդդեմ կառավարական իշխանության։

Իղեալ սրած, —թերես ավելի գանդաղ կերպով, քան մեզ համար ցանկալի կլիներ, բայց դրա փոխարեն հաստատապես, —յեր կու այդ թերությունն ել կվոչնչացվեն վո՛չ միայն կապիտալիզմի ընդհանուր զարդացմամբ, այլև ներկա պատերազմով։

Համենայն գեղս, սուսական հեղափոխության պատմությունը, նը, ինչպես նաև 1871 թվի Փարիզի կոմունայի պատմությունը, անհերքելի մի գաս և տալիս մեղ, վոր միլիտարիզմը յերեք և վոչ մի զեղքում չլ կարող հաղթահարվել և վոչնչացվել վորեւ այլ մշյղանակով, բայց յեթե միմիայն ժողովրդական բանակի մեկ մայնական կալով նրա մյուս մասի գեմ։ Բավական չե միայն հոխորատալ, անհետել, «Ժխտել» միլիտարիզմը, քննադատել և փաստարկել նրա վնասը, չիմարություն և խաղաղ կերպով հրաժարվել զինվորական ծառայությունից, —ինդերն այն ե, վոր կարելի վել զինվորական ծառայություն մեջ պահել պրոլետարիատի հեղափոխական գիտակցությունը և այն ել վո՛չ միայն ընդհանրապես, այլ կրնկեատ կերպով նախասատարատել նրա լավացույն տարերն այն կրնկեատ կուտայսի համար, վոր ժողովրդի մեջ առաջացած խորագույն խմորնի համար, վոր ժողովրդի մեջ առաջացած գործույնությունն իրումների պահին նրանք հեղափոխական բանակի դլուխ կանգնեն։

Նույն բանն ե ուսուցանում մեղ ամեն մի կապիտալիստական պետության ամենորյա փորձը։ Այլակիսի պետության ապարած ամեն մի «փոքրիկ» ձգնաժամը ցույց ե տալիս մեղ մինիստայութ այն կոիվների տարերն ու սպամերը, վորոնք մեծ ձգնաժամի պահին անփուսափելիորեն կրկնվելու յեն խոշոր մասշտաճամի պահին եական հակառակ պատկանական համարական ներքին դորի վեցնակամ կամ կամ կուտայսի անփուսափելիորեն կրկնվելու յեր հայտնի դարձագույն գործադրություն չե մի գործադրուլ, որինակ, յեր ով։ Հապա ուրիշ ի՞նչ բան ե ամեն մի գործադրուլ, որինակ, յեր վոչ կապիտալիստական համարակության մի փոքրիկ ձգնաժամ։ Միթե իրավացի չեր պրոլետարական ներքին գործերի մինիստր ժամանակ ֆոն-Պուտակամերը, յերը ասում եր իր հայտնի դարձագույն գործադրություն չե մի գործադրուլ յեղափոխության հիդրան ե նավածքը—«ամեն մի գործադրուլից հեղափոխության հիդրան ե նավածքը»։ Ցույց չե՞ն տալիս մեղ արդյոք գործադրուլների ժամանում։

15

պիտալիստական յերկրներում, թե գործն ինչ դրության մեջ է լինելու խսկապես խոշոր ճշնաժամերի ժամանակ:

Սակայն նորից վերադառնում եմ ռուսական հեղափոխության պատմությանը:

Յես փորձեցի նկարագրել ձեզ, թե բանվորական գործադուլներն ինչպես ցնցեցին ամբողջ յերկերը և շահագործվողների ամենալայն հետամնաց խավերը, ինչպես ծայր առավ դյուղացիական շարժումը, ինչպես այն զուգորդվում եր զինվորական ապրություններով:

1905 թվի աշնանն ամբողջ շարժումը հասավ իր գագաթնակետին: Ոգոսասոսի 19 (6)-ին հրապարակվեց ցարի մանեֆիետուք ժողովրդական ներկայացուցչություն ստեղծելու մասին: Այսպես կոչված Բուլիգինյան Դումա պետք ե ստեղծվեր ընտրական այն իրավունքի հիման վրա, վորպիսին յենթադրում եր կուրյոզային փոքրաքանակ ընտրողներ և այդ յուրորինակ «սպառամենտին» չեր տրամադրում վորեւ որենսդրական իրավունք, այլ միմիայն — խորհրդակցական:

Բուրժուազիան, լիբերալները, ուղղութունիստները պատրաստ եյին յերկու ձեռքով պինդ բոներու վախեցած ցարի այդ «պարզեցը»: Բոլոր ուժորմիստների նման՝ 1905 թվի մեր ուժորմիստներն ել չկարողացան հասկանալ, վոր լինում են պատմական սիստուցիաներ, յերբ ուժորմները և նամանավանդ ուժորմների խոստումները բացառապես մի նպատակ են հետապնդում—դադարեցնել ժողովրդի խմորումը, հարկադրել հեղափոխական դասակարգին, վոր վերջ տա կամ առնվազն թուլացնի պայքարը:

Խուսաստանի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան լավ հակացավ այդ արտօնաշնորհման, 1905 թ. ողոսասոսին խաբումիկ սահմանադրություն չնորհելու խսկական բնույթը: Յեվ այս պատճուղ նա, մի վայրկյան անդամ չհապաղելով լողունդ արձակեց—կորչի՛ խորհրդակցական Դուման: Բոյկո՛տ Դումային: Կորչի՛ ցարական կառավարությունը: Այդ կառավարությունը տապալելու նպատակով հեղափոխական պայքարի շարունակություն: Վոչ թե ցարը, այլ հեղափոխական ժամանակավոր կառավարությունը պետք ե գումարի առաջին խսկական ժողովրդական ներկայացուցչունը Խուսաստանում:

Պատմությունն ապացուցեց հեղափոխական սոցիալ-դեմոկրատների իրավացիությունը նրանով, վոր Բուլիգինյան Դուման յերեք չգումարվեց: Դեռ չգումարված՝ այն սրբեց-տարավ հեղափոխական փոթորիկը: Այս փոթորիկը հարկադրեց ցարին մի

նոր ընտրական որենք հրատարակելու, վորն զգալիորեն ավելացնում եր ընտրողների թիվը, և ապա՝ ընդունելու Դումայի որենսդրական բնույթը:

1905 թ. հոկտեմբերն ու դեկտեմբերը ռուսական հեղափոխության վերը ցնցեցին գծի բարձրադույն կետն և նշանավորում: Ժողովրդի հեղափոխական ուժի բոլոր աղբյուրները բացվեցին ավելի լայն, քան առաջ: Գործադուլավորների քանակը, վորպիսին 1905 թվի հունվարին, ինչպես յես արգեն հաղորդեցի ձեզ, կազմում եր 440 հազար, — 1905 թվի հոկտեմբերին արդեն կես միլիոնից անցուալ (նկատեցեք, վոր միայն մերկ ամսվա ընթացքում): Բայց այս քանակին, վոր ընդդրկում ե առաջ գործարանային բանվորներին, պետք ե ավելացնել նաև մի քանի հարյուր հազար վորներին, վորպիսին բանվորներին, փոստ-հեռագողական ծառայողներին:

Ռուսաստանի յերկաթուղային ընդհանուր գործադուլը դաշտացրեց յերկաթուղային յերթեեկությունը և ամենալճուական կերպով վատեց կառավարության ուժը: Բացվեցին համալսարանների դռները, և լսարանները, վորոնք խաղաղ ժամանակի հատկացած եյին բացառապես նրա համար, վոր շշմեցնեն յերիտական գլուխները պրոֆեսորական ամբիոնային խմաստակությամբ սարդ գլուխները պուրծուալիկի և ցարկիզմի հլու ծառաներ, և նրանց գլուխներն բուրժուալիկի եյին ծառայում հազարալոր ու հազարվոր բանվորների, արհեստավորների, ծառայողների համար, բայց բանվորների հազարալոր կուլտուրի, և առաջնորդության մեջ առաջին միջոցներ ձեռնարկել: Խուսական սկանդության մեջ առաջին անդամ եր, վոր Գետերը բուրժուալիկի և այլ քաղաքներում ազատ կերպով լույս տեսան հեղափոխական թերթեր: Հենց մենակ Գետերը բուրժուալիկի լույս եր տեսնում սոցիալ-դեմոկրատական 3 ամենորյա թերթ՝ 50-ից մինչեւ 100 հազար տիրաժուվ:

Պրոլետարիատը գլխավորում եր չարտումը: Նա խնդիր եր գրել—հեղափոխական ժանապարհով նվաճել 8-ժամյա աշխատանքային որը: Այն ժամանակ Պետերուրդի պրոլետարիատի մարտական լողունգն եր՝ «8-ժամյա որ և զինք»: Հարաձուն բանվորական մասսայի համար այլևս ակներեւ եր դառնում, վոր հեղա-

փոխության բախտը կարող է լուծել և լուծելու յև միմիայն զինաված պայքարը:

Պայքարի կրակում կազմվեց յուրակերպ մասսայական կազմակերպությունը — Բանվորների Պատգամավորների նշանավոր խորհուրդները, բոլոր գործարանների պատգամավորների ժողովները: Բանվորների Պատգամավորների այդ խորհուրդները թուսառատանի մի քանի քաղաքներում ավելի և ավելի եյին սկսում ժամանակավոր հեղափոխական կառավարության գեր, ապստամբության մարմինների և ղեկավարների գեր խաղալ: Փորձեր արվեցին կազմակերպելու Զինվորների և Նախատիների Պատգամավորների Խորհուրդների և նրանց միացնելու Բանվորական Պատգամավորների Խորհուրդների հետ:

Թուսաստանի քաղաքներից մի քանիսն այն որերին ապրում եյին տեղային տարբեր մանր «Հանրապետությունների» ըրջանը, վորոնց մեջ կառավարական իշխանությունը քչված էր և Բանվորների Պատգամավորների Խորհուրդն իսկապես գործում էր իրեն պետական մի նոր իշխանություն: Դժբախտաբար, այդ ըրջանը շատ կարծատև էր, «Հաղթանակները» չափազանց թույլ, չափազանց մեկուսացած իրարից:

Գյուղացիական շարժումը 1905 թվի աշնանը հասալ ավելի խոշոր չափերի: Ամբողջ յերկրի գավառների յերրորդից ավելին բռնված էր «գյուղացիական անկարգություններով» և գյուղացիական իսկական ապստամբություններով: Գյուղացիները Հրկիզեցին մոտ յերկու հազար դաստակերտ (շամաբան) և իրենց մեջ բաշխեցին այն բոլոր կենսամիջոցները, վոր ազնվական գիշատիչները կողոպտել եյին ժողովրդից:

Դժբախտաբար, այդ շախատանքը չափազանց քիչ է եր հիմնավոր: Դժբախտաբար, գյուղացիներն այն ժամանակ վոչնչացրին ազնվականների դաստակերտների ընդհանուր քանակի միմիայն տասնեւհինգերորդական բաժինը, միմիայն տասնեւհինգերորդական բաժինն այն ամենի, ինչ վոր նրանք պետք են վոչնչացնեյին, վորպեսզի վերջնականապէս ջնջելին ոռուսական հողի յերեսից Փեռողական խոչը հողատիրության խայտառակությունը: Դժբախտաբար, գյուղացիները գործում եյին չափազանց ցրված, անկազմակերպ, վոչ բավականաչափ հարձակողական, և այդ են հեղափոխության պարտության արմատական պատճառներից մեկը:

Թուսաստանի ձեշված ժողովուրդների մեջ բռնկվեց ազգային-ազգատաղբական շարժում: Թուսաստանում բնակչության կեսից ավելին, զբերե յերեք հինգերորդականը (նշգրիտ — 57 տոկոսը)

յենթարկվում է ազգային ձնշման: Նրանք չեն ոգտվում մինչև անգամ մայրենի լեզվի ազգատությունից, նրանց բոնի կերպով ոռուսացնում են: Որինակ, մահմեղականները, վորոնք թուսաստանում տասնյակ միլիոնների բնակչություն են կազմում, ապշեցնող արագությամբ, ընդհանրապէս բաղմազան կազմակերպությունների հակայական ամման մի դարաշրջան եր այն, մահմեղականների միություն կազմակերպեցին այն ժամանակ:

Վորպեսզի ժողովին և մանավանդ յերիտասարդությանը այն բանի մի որինակը տամ, թե այն ժամանակվա թուսաստանում ինչպես եր բարձրանում ազգային-ազգատաղբական շարժումը՝ բանվորական շարժման կազմակերպությամբ, յես այստեղ կը բեմ մի փոքրիկ որինակ:

1905 թվի գեկտեմբերին հարյուրավոր դպրոցներում դպրոցական հասակի լեհական յերեխանները վառեցին բոլոր ոռուսական գրքերը, պատկերները և ցարերի նկարները, ծեծեցին և դպրոցներից դուրս վոնդեցին ոռուս ուսուցիչներին և ոռուս ընկերներին, գուշլով: «Դուրս կորեք, գնացե՛ք! Սուսաստան»: Միջնակարգ գուշլով: 1) բոլոր միջնակարգ դպրոցները սկետք և յենթարկվեն Բանվորների Պատգամամալորների Խորհրդին, 2) աշակերտական և բանվորական միացյալ ժողովների գումարումը կերտական և բանվորական միացյալ ժամանակություններում, 3) գիմնազիաներում կարմիր բաճկոններ հագնելու թույլատություն՝ ի նշան գալիք պրոետարական հանրապետությանը պատկանելուն և այլն:

Վորքան ավելի եյին բարձրանում շարժման ալիքներն, այնքան ավելի յեռանդով ու վճռականությամբ եր զինվում ուեակցիան՝ հեղափոխության դեմ կովելու համար: 1905 թվի ոռուսական հեղափոխության մեջ արդարացալ այն, ինչ վոր 1902 թվին կառուց եր կ. Կառուցկին իր «Սոցիալական հեղափոխություն»⁴⁾ գրում (նա այն ժամանակ, ի գեպ ասած, զեռ հեղափոխական մարքսիստ եր և վոչ թե սոցիալ-պատրիտների և ոպորտունիստների պաշտպան, ինչպես այժմ): Նա գրում եր հետեւյալը.

...«Գալիք հեղափոխությունն... ավելի քիչ են նմանվելու հանկարծակի ապատամբության ընդդեմ կառավարության և ավելի շատ՝ յերկարատե քաղաքացիական պատերազմի»:

Այդպես ել յեղալ: Անկասկած այլուկ' ել կլինի յեկրոպական գալիք հեղափոխության մեջ:

Ցարիզմի ատելությունն ուղղվեց հատկապէս հրեաների դեմ: Մեկ կողմից՝ հրեաները հեղափոխական շարժման առաջնորդների

առանձնապես բարձր տոկոս ելին տալիս (Հըեա բնակչության ընդհանուր քանակի համեմատությամբ)։ Յեվ այժմ ել, իդեպ առած, հըեաներն ունեն այն ծառայությունը, վոր այլ ժողովուրդների համեմատությամբ՝ նրանք ինտերնացիոնալիստական հոսանքի ներկայացուցիչների հարգելուականորեն բարձր տոկոս են տալիս։ Մյուս կողմէց՝ ցարիզմը հըաշալիորեն ոգտագործել գիտեր բնակչության ամենատղետ խավերի ամենազարշելի նախալաշարումները հըեաների դեմ, այն նպատակով, վոր ջարդեր կազմակերպի, յեթե վոչ ամսիջականորեն ղեկավարի այդ ջարդերը, — այդ հըեշավոր ջարդերը խաղաղ հըեաների, նրանց կանանց ու յերեխաների, ջարդեր, վորոնք այնպիսի զգվանք առաջացրին ամբողջ քաղաքակիրթ աշխարհում։ Յես նկատի ունեմ, իհարկե, քաղաքակիրթ աշխարհի իսկապես դեմոկրատական տարրերի զգվանքը, խևլ այդպիսիներն են բացառապես սոցիալիստական բանվորները, պըութատարները։

Հարյուր քաղաքում այդ ժամանակամիջոցին հաշվվում երավելի քան 4.000 սպանված և ավելի քան 10.000 հաշմանդամ դարձված։ Արեմտյան Ծելրոպայի մինչև անդամ ամենից աղատ, անդամ հանրապետական յերկրների բուրժուազիան հըաշալի կերպով կարողանում ե զուգակցել «ռուսական գաղանությունների» մասին իր կեղծավոր Փրաներն ամենից անամոթ վրայացին դորժարքների հետ, մանավանդ ցարիզմի Փինանսական ոժանդակության և Ռուսաստանի իմպերիալիստական շահագործման հետ, վոր կատարվում ե կապիտալի արտահանման միջոցով և այլն։

1905 թվի հեղափոխությունն իր գագաթնակետին հասավ Մոսկվայի դեկտեմբերյան ապստամբությամբ։ Ապստամբների փոքրիկ մի խմբակ, այն եկաղաքակերպված և զինված բանվորների մի խմբակ, — դրանց թիվը ուրեմն հագարից ավելի չեր, — ինն որվա ընթացքում դիմադրություն եր ցույց տալիս ցարական կառավարությանը, վորը չեր կարողանում վստահել Մոսկվայի կայազորին, այլ, ընդհակառակն՝ ստիպված եր փակած պահել այն, և միմիայն Պետերբուրգի Սեմյոնովսկի գնդի ժամանելու չնորհիվ իլիմակի յեղավ ապստամբությունը ճնշելու։

Բուրժուազիան սիրում ե ինչ-որ արհեստական բան անվանել Մոսկվայի ապստամբությունը և ծաղրել այն։ Այսպես, որինակ, դերմանական այսպես կոչված «գիտական» գրականության մեջ պարոն պըութեսոր Մաքս Վերեբը Ռուսաստանի քաղաքական գարդացման մասին գրած իր մեծ աշխատության մեջ⁵) Մոսկվայի ապստամբությունն անվանել ե «պուտչ» («վոթոցարձակում»)։

«Լենինյան խումբն, — ասում ե այդ «մեծաղիտում» պարոն պըությունը, — և եսելների մի մասը վաղուց ե արդեն, զոր նախապատճեռ ելին այդ անխմատ ապստամբությունը։» Վախկոտ բուրժուազիայի պըութեսորական այս իմաստությունն ըստ արժանույն գնահատելու համար բավական ե հիշողության մեջ լոկ վերակենդանացնել գործադուլների վիճակազրուղության չոր ու ցամաք թվերը։ 1905 թվի հունվարին Ռուսաստանում յեղել ե միմիայն 13 հազար զուտ քաղաքական գործադուղություն, հոկտեմբերին՝ 330 հազար, դեկտեմբերին այդ թիվը լավոր, հոկտեմբերին՝ մաքսամբությունները, և մենք իսկույն ցիների ու զինվորների ապստամբությունները, և եթե կանք հետեւյալ համոզման. բուրժուազիան «գիտության» եեթ կգանք հետեւյալ համոզման. գործուական «գիտության» դատողությունը դեկտեմբերյան ապստամբության մասին վո՛չ միայն անհեթեթյունն ե, այլև վախկոտ բուրժուազիայի ներմականականավոր միությունն ե, վորը հանձին կայացուցիչների բանալոր մի խուսափումն ե, վարդ հանձին կայացուցիչների ապստամբությունները, և մինք իսկույն յին թշնամուն։

Իրականում ոռուսական հեղափոխության ամբողջ զարդացումն անխուսափելիորեն մզում եր դեպի միություններ կառական զինված կրիվ աղառական կառավարության և գասակարգային գիտակից պըութետարի ավանդաբղի միջե։

Իմ վերոհիշյալ կը ուղարկած ապահովությունն ինս արդեն նշեցի, թե ինչումն եր կայանում ոռուսական հեղափոխության թուլությունը, վորը հասցըց նրա ժամանակավոր պարտությանը։

Դեկտեմբերյան ապստամբության ճնշումից սկսվում ե հեղափոխության վայրէջքի գիծը։ Այս ժամանակաշրջանում ել կան փոխության հետաքրքրական մոմենտներ. բավական ե միայն վերչափազանց հետաքրքրական մոմենտներ. բավական ե միայն վերչափազանց հետաքրքրական մոմենտների տարրերի յերկակի հիշել բանվոր դասակարգի ամենամարտական տարրերի յերկակի հայազորին, այլ, ընդհակառակն՝ ստիպված եր փակած պահել այն, և միմիայն Պետերբուրգի Սեմյոնովսկի գնդի ժամանելու շնորհիվ իլիմակի յեղավ ապստամբություն։

Բայց ինձ տրված ժամանակը գրեթե լրացել է, և յետ չեմ կամենում իշարը գործադրել իմ ունկնդիրների համբերությունը։ Այսկայն ամենակարեւը հեղափոխության մեջ՝ նրա դասակարգային բնույթը, նրա շորժիչ ուժերը, նրա կովի միջոցները յետ, — ինչպես ինձ թվում ե, — արդեն ուրժադեցի, ինչ չափով յետ, — ինչպես այդ թվում ե, — արդեն ուրժադեցի, և այդպիսի հակայական թեման վոր ընդհանրապես հնարավոր ե այդպիսի հակայական թեման սպառել համառոտ զեկուցումով։

Ելի միայն մի քանի շատ հակերձ դիտողություններ սուսական հեղափոխության համաշխարհային նշանակության մասին:

Ռուսաստանը աշխարհագործեն, տնտեսապես և պատմականորեն վերաբերում ե վոչ միայն Յելրոպային, այլև Ասիային: Յել այս պատճառով մենք տեսնում ենք, վոր ոռւսական հեղափոխությունը միայն այն բանին չի հասել, վոր վերջնականապես արթնացը ել է քնից Յելրոպայի ամենախոչըր և ամենահետամնաց յերկիրը և ստեղծել է հեղափոխական մի ժողովուրդ, վորը զեկալրպում ե հեղափոխական պրոլետարիատի կողմից:

Նա միայն այդ բանին չի հասել: Ռուսական հեղափոխությունը շարժում է առաջ բերել բոլմանդակ Ասիայում: Հեղափոխությունները Տաճկաստանում, Պարսկաստանում, Չինաստանում ապացուցում են, վոր 1905 թվականի հումկու ապստամբությունը խոր հետքեր ե թողել և վոր անջնջելի յէ նրա ազգեցությունը, վոր արտահայտում ե հարյուր և հարյուր միլիոնավոր մարդկանց առաջընթաց շարժման մեջ:

Ռուսական հեղափոխությունն անուղղակի կերպով իր ազգեցությունն ե թողել նաև արեմուտքում դանվող յերկրների վրա: Զպետք ե մոռանալ, վոր հենց վոր 1905 թվի հոկտեմբերի 30-ին Վիեննայում հեռադիր ստացվեց ցարի սահմանադրական մանիֆեստի մասին, այս լուրը վճռական դեր կատարեց Ավստրիայում ընդհանուր ընտրական իրավունքի վերջնական հաղթանակի համար:

Ավստրիական սոցիալ-դեմոկրատիայի համագումարի նիստի ժամանակ, յերբ ընկեր Ելենը բուհուղենը—այն ժամանակ նա դեռևս սոցիալ-պատրիոտ չեր, այն ժամանակ նա զեռ ընկեր եր—իր զեկուցումն եր տալիս քաղաքական գործադուլի մասին, նրա տուջեւ սեղանի վրա դրվեց այդ հեռադիրը: Վիճականություններն անմիջապես գաղարեցվեցին: Մեր տեղը փողո՞ցն ե,—ահա թե ինչպիսի կանչ լավեց ալստրիական սոցիալ-դեմոկրատիայի պատրամալորների նիստերի գահինը մեկ: Յել մոտակա որերը փողոցային խոշորագույն ցույցեր տեսան Վիեննայում և բարիկադներ՝ Պրադայում: Էնդհանուր ընտրական իրավունքի որենքի հաղթանակն Ավստրիայում դրանով արդեն վորոշված եր:

Շատ հաճախ արեմտա-յելրոպացիներ են պատահում, վորոնք ոռւսական հեղափոխության մասին այնպես են դատում, կարծես թե այդ հետամնաց յերկրում տեղի ունեցած անցքերը, հարաբերությունները և կովի միջոցները շատ քիչ նմանություն ունեն արեմտա-յելրոպական հարաբերություններին և հենց այդ

պատճառով հաղիով թե կարող են վորեն գործնական նշանակություն ունենալ:

Զկա վոչինչ ավելի սխալ բան, քան այդպիսի կարծիքը:

Անկասկած՝ յելրոպական դալիք հեղափոխության դալիք մարտերի ձեերն ու առիթները շատ տեսակետներից տարբերվելու յեն ոռւսական հեղափոխության ձեերից:

Բայց, չնայած դրան, ոռւսական հեղափոխությունը—հենց իր պրոլետարիական բնույթի չնորհիլ՝ այս բառի այն հատուկ նշանակությամբ, վորի մասին յես արդեն խոսեցի, —զալիք յել-նշանակությամբ, վորը մասին հայտարանն ե մնում: Կասկած չկա, ըստական հեղափոխության նախարանն ե մնում: Կասկած չկա, վոր այս զալիք հեղափոխությունը կարող ե լինել միմիայն պրո-լետարական հեղափոխություն և այն ել այս բառի առաջել խոր նշանակությամբ: —պրոլետարիական, սոցիալիստական նաև իր նշանակությամբ: Գալիք այս հեղափոխությունը ցույց կտա բովանդակությամբ: Գալիք այս հեղափոխությունը կարող են աղա-տերը, այն ե՝ քաղաքացիական պատերազմները կարող են աղա-տերը մարդկությունը կապտարիական գլուխությունը կարող իսկ մյուս կողմից այն, տագրել մարդկությունը կապտարի ծիծից, իսկ մյուս կողմից այն, վոր միմիայն դասակարգայնորեն դիտակից պրոլետարները կարող վոր միմիայն դասակարգայնորեն դիտակից պրոլետարներն հանդես գալ և հանդես կրան իրեւ շահագործվողների հսկա-յական մեծամասնության առաջնորդությունները:

Յելրոպայի այժմյան մեռելային ըստությունը մեզ չպիտի իմա-րի: Յելրոպան հզի յե հեղափոխությամբ: Խմակերիալիստական պատերազմի հրեշավոր սարսակիները, թանգության տանջանքներն ամենուրեք հեղափոխական տրամադրություններ են գարթեց-նում, և տիրող դասակարգերը—բուրժուազիան և նրանց գործա-կատար կառավարություններն, ալելի և ավելի յեն ընկնում փա-կատար կառավարությունների, ալելի յեն ընդհան-կողին, վորից, առանց մեծադրույն ցնցումների, նրանք ընդհան-րապես դուրս դալ չեն կարող:

Այնպես, ինչպես Ռուսաստանում 1905 թվին պրոլետարիատի դեկալարությամբ ժողովրդական ապստամբություն սկսվեց ցա-րական կառավարության դեմ, նպատակ ունենալով դեմոկրա-տական հանրապետության նվաճումը, այդպես ել, հենց այս տական պատերազմի կապակցությամբ, առաջնկա տարինե-րը կհասցնեն այն բանին, վոր ժողովրդական ապստամբություն-ներ կլինեն Յելրոպայում պրոլետարիատի զեկավարությամբ՝ ընդդեմ Փինանսական կապիտալի իշխանության, ընդդեմ իուզոր բանկերի, ընդդեմ կապիտալատների, և այդ ցնցումները չեն բանկերը կերպ վերջանալ, բայց յեթե բուրժուազիայի սեփա-կանագրիումով, սոցիալիզմի հաղթանակով միայն:

Մենք, ծերունիներս, թերևս չենք ապրի մինչեւ այս դավիքը հեղափոխության վճռական մարտերը: Բայց, թվում ե ինձ, յես կարող եմ մեծ վստահությամբ այն հույսը հայտնել, վոր յերիտասարդությունը, վորն այնքան հրաշալի կերպով դործում է Շվեյցարիայի և համայն աշխարհի սոցիալիստական չարժման մեջ, բայտ կունենա վո՞չ միայն կովելու, այլև հաղթելու գալիք պրոլետարական հեղափոխության մեջ:

Գրված է 1917 թ. հունվարին:

Առաջին տնօքամ տպագրվել է 1925 թ.
հունվարի 22-ին «Պրաւա» թերթում,
№ 18 (2949):

Խուսերեն թարգմանված և
գերմաներենից:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

1) Լենինը «Զեկուցում 1905 թ. հեղափոխության մասին» գրել ե գերմաներեն լեզվով և կարգացել ե բանվորական յերիտասարդության կողմից 1917 թ. հունվարի 22(9)-ին Ցյուրիխի «Ժողովրդական Տան» կազմակերպված ժողովում: Զեկուցման վրա Լենինն սկսել ե աշխատել 1916 թ. դեկտեմբերի 20-ի մոտեքը: Հստ յերկութին զեկուցման ժամանակը կրծատելու համար վե. ի. զրածից մի շարք տեղեր բաց ե թողել: Ներքեւում մեջ բերված բնագիրը վե. ի. գերմաներենն լեզվով զրած զեկուցման թարգմանությունն է՝ Պ. ի. Սկլուցով-Ստեպանովի խմբագրությամբ:—3

2) Վ. ի. պետիցիան վոչ իսկական քաղվածքներով ե տալիս:—4

3) Խոսքը Պ. Բ. Սորովեյի «Կենսական խնդիր» հոդվածի մասին և, լիբրալների «Օսвобոյցնե» անկերպատ որդանի 1905 թ. հունվարի 7(20)-ի № 63-ում: «Օսվոյցնե» ժուռալի մասին ավելի մանրամասն տես Ցերկերի V հատոր, էջ 410, ժանոթ. 46:—5

4) Կարլ Կաուցիկի «Սոցիալական հեղափոխություն» (Kautsky, «Die Soziale Revolution», Berlin, «Vorwärts» 1902): Թարգմանություն Ն. Լենինի խմբագրությամբ, Ժ. Ն. և Ա. Ա. Առաքելյանի առաջին հրատարակությունը 1899 թվին:—19

5) Խոսքը Max Weber-ի գրքի մասին և «Russlands Übergang zum Scheinkonstitutionalismus». Archiv für Sozialwissenschaft und Sozialpolitik, Bd. V. Tübingen. J. C. B. Mohr. 1906. S. S. 165—401. (Մաքս Վեբեր, «Ծնուանականի անցումը կեղծ սահմանադրականության»: Արխիվ սոցիալական գիտության ու քաղաքականության: Ցյուրինգեն: 1906, էջ 165—401):—20

453

453✓

Դաստիարակութեան
Տեսչութեան և առաջարկացութեան
Սեփական գույքի վեհապետութեան
Կոնտրոլ սրբագրիչ և Աքույտացութեան

Գլավալիստի լիազոր կ-3255
Հրատ. № 528, պատուի և գույքի միաժամանակ 5000,

Հանձնված և արտադրության 11/1 1938 թ.
Ստորագրված և տպագրության 16/1 1938 թ.

Գիւլ 25 կ.

Հայկական ազգային, Յեղիան, Ալավերդյան № 71

416с 25 4.

В. И. ЛЕНИН
ДОКЛАД О РЕВОЛЮЦИИ 1905 ГОДА
Армпартиздат, Ереван, 1938

«Ազգային գրադարան»



NL0172610

